Հայաստանում կարող է բացվել եզակի գազանանոց-բուծարան

| Տպել |

Շաբաթ, 30 Հունվար 2016 20:07

Քչերը գիտեն, որ շուրջ 5 տարի է, ինչ Երևանում կարող էր գործել Հայաստանում ու տարածաշրջանում միակ գազանանոց-բուծարանը, որը սակայն այդպես էլ չներկայացավ հանրությանը:

Երկար տարիներ ԱՄԷ-ում ապրած ու շուրջ 20 տարի գործունեություն ծավալած հայ գործարար Արթուր Խաչատրյանը տարիներ առաջ վերադարձավ հայրենիք՝ այստեղ գազանանոց-բուծարան ստեղծելու գաղափարով: Վերջինս տարբեր երկրներից աշխատանքի առաջարկներ էր ստացել, սակայն ընտրել էր իր հայրենիքը՝ Հայաստանը, ու մեծ նպատակներով սկսել աշխատանքները:

Եթե գազանանոցները միայն ցուցադրում են կենդանիների, ապա գազանանոց-բուծարանի նպատակն ու գործունեությունն այլ է: «Զoo ֆաունա արտ» ընկերության տնօրեն Արթուր Խաչատրյանը բազմաթիվ ծրագրեր ունի, որոնք ապագայում կյանքի կկոչվեն: Գազանանոց-բուծարանում նախատեսված է իրականացնել կենդանիների կերերի ու վանդակների արտադրություն, որն առաջինն է լինելու տարածաշրջանում, ինչպես նաև՝ էկզոտիկ կենդանիների և թռչունների կարանտին: Ծրագրվում է նաև կենդանիների անֆիթատրոն կառուցել, որտեղ կենդանիները հանդես կգան փոքր ներկայացումներով: Նախատեսվում է Հայաստանի վայրի ծառատեսակների անտառի ստեղծում, որոնց կմասնակցեն նաև այցելու երեխաներն ու պարբերաբար ծառեր կտնկեն ու կխնամեն: Սահմանափակ կարողություններ ունեցող և ծնողազուրկ երեխաների համար հատուկ ծրագրով ամառային հանգստի կազմակերպումն էլ հնարավորություն կտա ընկերության կորպորատիվ սոցիալական պատասխանատվության ծրագրերը երկարաժամկետ

պլանավորել:

Սակայն, շուրջ 2-3 տարի է, ինչ կառուցման աշխատանքները կանգնեցված են: Պարոն Խաչատրյանը վստահեցնում է, որ «Հայաստանում որոշ լրատվամիջոցներ իր անվան շուրջ մեղադրանքներ ու զրպարտություններ են տարածում, որոնք իրականությանը չեն համապատասխանում, թելադրված են դրսից և այդ ամենն արվում է իր ծրագրերը խոչընդոտելու համար, քանի որ որոշ մարդիկ չեն ցանկանում, որ Հայաստանում գործի նման գազանանոց-բուծարան: Իսկ սա հնարավորություն է, որ հայերն առանց էկզոտիկ երկրներ այցելելու ծանոթանան ամենայուրօրինակ, ամենահազվադեպ կենդանիներին հենց Երևանում»:

«Տարածվում է ստահոդ տեղեկատվություն, թե իբր ես Կոնգոյում անօրինական գործունեություն եմ ծավալել. բացարձակ սուտ է: Յուրաքանչյուր կենդանի բերված է օրինական ճանապարհով, ու, եթե ուղարկող երկրում են խնդիրները, կամ այնտեղ ինչ-որ անօրինականություն է կատարվում, ապա ես ի՞նչ կապ ունեմ այդ ամենի հետ: Ուղարկող երկիրն է պատասխանատու, ստացող երկիրն ու իր ներկայացուցիչը ի՞նչ պատասխան պետք է տան»,- Anews.am-ի հետ զրույցում նշեց պարոն Խաչատրյանն ու հավելեց, որ ոչինչ չի կարող խանգարել իր ծրագրերին:



«Տարիներ առաջ արտերկրից ինձ մոտ եկավ լրագրող, ներկայացավ Կառլ Աման ու խնդրեց շրջել տարածքով՝ մեկնաբանելով, որ ֆիլմ է նկարում կենդանիների մասին ու ցանկանում է ֆիլմում ներառել նաև իմ կենդանիներին: Ես բնականաբար, չմերժեցի: Նկարահանման ժամանակ պարզ դարձան իր այցի իրական պատճառները: Ամանը սպառնալիքներ հնչեցրեց՝ թե կապիկներն անօրինական՝ ճանապարհներով են հասել Հայաստան ու ավելացրեց՝ Հայաստանն ի՞նչ երկիր է, որ այստեղ այսպիսի կենդանիներ լինեն»:

«Արդեն երկու տարի է, ինչ ՀՀ ֆինանսների նախարարության քննչական մարմինը փաստի հիման վրա գործ է հարուցել: Փաստ ներկայացնողը լրատվամիջոցն է, որը պնդում է թե իմ դեմ հարուցված գործ կա, բայց դրանք տարբեր բաներ են»:

«Եթե ինչ-որ կեղծիքներ, ապացույցներ լինեն, որ անօրիանական եմ գործել, ապա ինչու՞ եմ ես մինչ այժմ ազատության մեջ: Իրոք ԱՄԷ-ում իմ անձնագիրը ինտերպոլը վերցրել է, սակայն Ձեր կարծիքով, եթե ես մաքուր չլինեի, ապա ԱՄԷ-ի ինտերպոլը հետ կտա՞ր իմ անձնագիրն ու կասե՞ր ներողություն: Բացառված է: Իրենք ճշտումներ կատարեցին ու պարզեցին, որ այս ամենը զրպարտություն է: Բոլորը գիտեն իմ գտնվելու վայրը, ինչու՞ չեն բերում նյութերն ու ապացույցները: Պատասխանը մեկն է. քանի որ այդ ամենը զրպարտություն է և ապացույց չկա»:

Արթուր Խաչատրյանը, սակայն չի ընկճվում ու վստահ է, որ շուտով իր բոլոր նախագծերն իրականություն կդառնան և Հայաստանում կգործի գազանանոց-բուծարան:

«Ինչու՞ Հայաստանում չի կարող լինել այն ամենն ինչ կա արևմուտքում և ԱՄՆ-ում: Պետք է նախ և առաջ հասկանալ, որ այս նախագիծը կզարգացնի գյուղատնեսության մի նոր ճյուղ: Օրինակ, ինչու մեր գյուղացուն հնարավորություն չընձեռվի պահել ոչ թե կով ու ոչխար, այլ օրինակ լամա, որից մեծ եկամուտներ կարող է ստանալ»,- նշում է պարոն Խաչատրյանն ու հավելում, որ կենդանիների ներկրումը միմիայն օրինական ճանապարհով է տեղի ունեցել ու ունենալու, և իր երկար տարիների փորձառության մեջ չի եղել մի դեպք, մի կենդանի, որին

նա ձեռք բերի անօրինական ճանապարհով:

«Զրպարտություններով զբաղվում են ծախված, անհայրենասեր մարդիկ: Այն ամենն ինչ ձեռք է բերվել, ձեռք է բերվել օրենքի շրջանակում և օրենքի շրջանակում էլ կարող եմ անել այն, ինչ ցանկանամ՝ պահել, վաճառել, նվիրել և այլն: Խոսքերիս հետ մեկտեղ կարող եմ ներկայացնել ապացույցներ: Այս տեղեկատվությունը երեք ամիսը մեկ թարմացվում է, մեկ նախադասություն ավելացնելով, սրելով և տարբեր պաշտոնյաների անուններ գրելով, փորձում են ստվերել ուրիշների գործը: Ես իմ գործը լավ գիտեմ, ես ունեմ համապատասխան արտոնագրեր, ունեմ վստահելի գործընկերներ արտերկրում և վերջիններս պնդում են, որ իրենց պարբերաբար կաշառք են առաջարկում, որպեսզի իմ անունը պախարակեն, ես այդ փաստերն ունեմ, երբ գա ժամանակը կհրապարակեմ, ես բազմաթիվ կենդանիներ եմ ներմուծել, ինչու են միայն խոսում կապիկների մասին, որովհետև օտարերկրյա ֆինանսավորող կազմակերպությունը, ով գումարները ծախսում է այս կամ այն լրատվամիջոցի վրա, կապիկների խնդրով է հետաքրքրված»,- ավելացնում է պարոն Խաչատրյանը:

Հ.Գ. Արթուր Խաչատրյանը համոզված է, որ վաղ թե ուշ գազանանոց-բուծարանը կբացվի Երևանում և հետագայում կունենա մասնաճյուղեր Հայաստանի Հանրապետության բոլոր խոշոր քաղաքներում, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում և կհամապատասխանեն միջազգային չափանիշներին:



Հեղինակ՝ Լիլիթ Սեդրակյան